ՀՏԴ 941(479.243)

Պատմություն

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ.
E-mail: vahrambalayan@mail.ru

ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ (1991-2021թթ.)

Մուստաֆա Քեմալի ժամանակներից սկսած առայսօր Թուրքիայի կառավարող շրջանները պանթյուրքիզմի մեջ են տեսել և տեսնում երբեմնի աշխարհածավալ կայսրության վերածննդի հնարավորությունը: Դրան հասնելու համար նախ անհրաժեշտ էր, որ Թուրքիան էթնիկ սահման ունենար Այսրկովկասի և Իրանի թուրքալեզու ժողովուրդների հետ: Այդ ճանապարհին կանգնած էին ԽՍՀՄ անվտանգության համակարգի մաս հանդիսացած խորհրդային Հայաստանը, այնուհետև Հայաստանի երրորդ Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը:

Ինչպես Ղարաբաղյան առաջին պատերազմի (1991-1994 թթ.), այնպես էլ հետպատերազմյան շրջանում և 2016թ. ապրիլյան մարտական գործողությունների (Ղարաբաղյան երկրորդ պատերազմ) ընթացքում Թուրքիան, դիվանագիտական խողովակներով ու կոշտ ուժի կիրառմամբ, փորձում էր արցախա-ադրբեջանական հակամարտությունը լուծել իր իսկ ստեղծած պետության՝ Ադրբեջանի օգտին:

Էրդողանի կառավարման տարիներին թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը ինստիտուցիոնալ բնույթ ստացավ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շրջափակումը բոլոր առումներով ավելի սաստկացավ: Այդ ամենի բացասական հետևանքները շոշափելի էին Ղարաբաղյան երրորդ պատերազմի (2020թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 10) օրերին:

Ադրբեջանա-թուրքական ալյանսը, միջազգային ահաբեկչական խմբավորումների գործուն մասնակցությամբ, Ղարաբաղյան երրորդ պատերազմի ժամանակ հաղթանակ

արձանագրեց: Արցախի Հանրապետությունը կորցրեց իր տարածքի 75 տոկոսը: Երկիրն ունեցավ մարդկային և նյութական ահռելի կորուստներ:

Բանալի բառեր՝ Արցախ, Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա, հանրապետություն, պատերազմ, ժողովուրդ, պայքար, տարածք, վարձկաններ, պանթյուրքիզմ, կայսրություն, ահաբեկիչներ:

В. Балаян

ПАНТЮРКИЗМ И ИСТОРИЧЕСКАЯ СУДЬБА АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ АРЦАХА (1991-2021)

Со времен Мустафы Кемаля до наших дней правящие круги Турции видели и продолжают видеть возможность возрождения некогда мировой империи в пантюркизме. Для этого в первую очередь необходимо было, чтобы Турция имела этническую границу с тюркоязычными народами Закавказья и Ирана. На этом пути стояла Советская Армения, входившая в систему безопасности СССР, а затем вторая Республика Армения, Республика Арцах.

И в первую карабахскую войну (1991-1994), и в послевоенный период, в том числе во время апрельских боевых действий 2016 г. (вторая карабахская война), Турция, с помощью дипломатии и грубой силы, старался в арцахско-азербайджанском конфликте вопрос решить в пользу Азербайджана.

Во время правления Эрдогана турецко-азербайджанское военно-техническое сотрудничество стало институциональным. Блокада Республики Армения и Республики Арцах усилилась по всем параметрам. Негативные последствия всего этого были ощутимы еще в дни третьей карабахской войны (27 сентября — 10 ноября 2020г.).

Азербайджано-турецкий альянс, при активном участии международных террористических группировок, выиграл третью карабахскую войну. Республика Арцах потеряла 75% своей территории. Страна понесла огромные людские и материальные потери.

Ключевые слова: Арцах, Армения, Азербайджан, Турция, республика, война, народ, борьба, территория, наёмники, Пантюркизм, империя, террористы.

V.Balayan

PAN-TURKISM AND THE HISTORICAL DESTINY OF THE ARMENIAN STATEHOOD OF ARTSAKH (1991-2021)

Since the time of Mustafa Kemal to the present day, the ruling circles of Turkey have seen and continue to see Pan-Turkism as the possibility of reviving the once world empire.

In order to achieve that, first of all, it was necessary for Turkey to have an ethnic border with the Turkic-speaking peoples of Transcaucasia and Iran. Soviet Armenia, which was part of the USSR security system, and then the Second Republic of Armenia, the Artsakh Republic, were standing on that path.

During both the First Nagorno-Karabakh War (1991-1994) and in the post-war period, as well as during the hostilities in April 2016 (the Second Karabakh war), Turkey, by means of diplomacy and brute force, was trying to resolve the Nagorno-Karabakh conflict in favor of Azerbaijan.
During the rule of Erdogan, the military-technical cooperation between Turkey and Azerbaijan became institutional. The blockade of the Republic of Armenia and the Republic of Artsakh intensified in all respects. The negative consequences of all these were tangible during the Third Karabakh war (September 27-November 10, 2020).
The alliance between Turkey and Azerbaijan with the active participation of international terrorist groups won the Third Karabakh war. The Republic of Artsakh lost 75% of its territory. The country suffered enormous human and material losses.
Key words: Artsakh, Armenia, Azerbaijan, Turkey, republic, war, people, struggle, territory, mercenaries, Pan-Turkism, empire, terrorists.

Ճիշտ է, Առաջին համաշխարհային պատերազմից հետո Մուստաֆա Քեմալին հաջողվեց նոր շունչ հաղորդել Թուրքիային, այնուամենայնիվ, պետք է նկատել, որ այդ կայսրությունը զրկվել էր զավթած բավականաչափ ընդարձակ տարածքներից:

Այդ ժամանակներից սկսած առայսօր Թուրքիայի կառավարող շրջանները պանթյուրքիզմի մեջ են տեսել և տեսնում երբեմնի աշխարհածավալ կայսրության վերածննդի հնարավորությունը: Դրան հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր, որ Թուրքիան էթնիկ սահման ունենար Այսրկովկասի և Իրանի թյուրքալեզու ժողովուրդների հետ: Այդ ճանապարհին կանգնած էին ԽՍՀՄ անվտանգության համակարգի մաս հանդիսացած խորհրդային Հայաստանը, այնուհետև Հայաստանի երրորդ Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը:

Լենինի և Տրոցկու քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո, Ստալինի բեմելի պայմաններում, իշխանական շրջանակներում էթնիկ տարրի ազդեցության մեծացմանը զուգընթաց, Կրեմլը ոչ միայն փոխեց իր արտաքին քաղաքականության ռազմավարությունը, այլև բուն երկրի ներսում ճնշեց թյուրքալեզու ժողովուրդների հավակնությունները: Անկարող լինելով դիմագրավել ստալինյան բոլշևիկյան մամլիչի անկասելի ճնշմանը՝ պանթյուրքիստական գաղափարախոսությունը հարմարվողական մեթոդներով ԽՍՀՄ-ում շարունակեց գործել ու գոյատևել՝ սպասելով նպաստավոր ժամանակների:

Դեռևս 1933 թ. Մուստաֆա Քեմալը հայտարարել էր, թե խորհրդային կայսրությունը կփլուզվի, և «եղբայրական Ադրբեջանը կդառնա ազատ»:[1]

Գորբաչովյան վերակառուցումից սկսած և մանավանդ ԽՍՀՄ կործանումից հետո պանթուրանական գաղափարախոսությունը նորից ջրի երես դուրս եկավ՝ նպատակ ունենալով ոչ միայն հարվածել հայկական զույգ պետություններին՝ ՀՀ-ին և ԱՀ-ին, այլ նաև ցնցել ռուսական պետության առանց այն էլ անկայուն հիմքերը:

Նախատեսված հարվածի ուժը կործանարար դարձնելու նպատակով պանթուրքիստները որոշեցին կիրարկության մեջ դնել նաև պանիսլամիզմից բխող գաղափարները:

Արցախյան առաջին պատերազմի սկզբնափուլում Ադրբեջանի իշխանությունները լայնորեն օգտագործում էին չեչեն գրոհայիններին: Ադրբեջանական «Obozrevatel…net» շաբաթաթերթին (2005 թ. հունվարի 7-14) տված հարցազրույցում գնդապետ Ա. Ռուստամովը խոստովանել է. «Այդ մարտերում մեզ անգնահատելի օգնություն են ցուցաբերել շուրջ 100 չեչեն կամավորներ Շամիլ Բասաևի և Սալման Ռադուևի գլխավորությամբ: Սակայն նրանք էլ մեծաքանակ զոհերի պատճառով ստիպված էին լքել մարտի դաշտը և հեռանալ»[2]: Բարձր գնահատելով հայ ազատամարտիկներին՝ Շամիլ Բասաևը վիրավոր վիճակում ասել է, թե կցանկանար, որ իր զինվորներն այդպես կռվեին[3]: Մեկ այլ չեչեն գրոհային Ալի Համազատովը խոստովանել է. «1993 թվականին մոտ երկու ամիս չեչեն ուղղահավատների խմբի հետ կռվել ենք «անհավատների» դեմ: Մեր ամիրի հետ պայմանավորվել էինք, որ յուրաքանչյուր սպանված հայի դիմաց պետք է ստանանք 200 դոլար: 1993 թ. հունիսին մեզ՝ մոտ 120 շահիդների ուղարկեցին հայկական Ագդերա (Մարտակերտ) գյուղի շրջան …: Հայերը սկզբունքորեն գերի չէին հանձնվում …: … ֆիդայիները, ինչպես իրենք էին իրենց կոչում, բարոյական բարձր պատրաստակամություն ունեին, հմտորեն քողարկվում էին, սիրում էին գրոհել անսպասելի: Դա սարսափի էր մատնում թյուրք «եղբայրներին», որոնք մի քանի զոհից հետո անկանոն փախչում էին: …Ամիրը ճիշտ խոսք էր ասում. Ամիր Ասլանբեկը վստահ էր, որ նրանք վաղ թե ուշ դուրս են մղելու ազերիներին»[4]:

Ռազմաճակատում բեկում մտցնելու նպատակով Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը որոշել էր ընդլայնել վարձկանների հավաքագրման

---

[1] *Տե՛ս «Посольство Турции, Турция, сближаясь с Арминией, хочеть ускорить развязку карабахского конфликта», Ae.az.http//www.aze.az/news-posolstvo-turciya-27331.html, 6 ноября, 2009.*

[2] ***Арешев А.**, «Карабахская проблема в контексте региональной политики», «Карабахский курьер», но. 1, 2010, стр. 38.*

[3] *Տե՛ս **Բալայան Վ.**, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 483: www.radiogan.com/portfolio/.*

[4] ***Հասրաթյան Ս.**, Հայացք դրսից (օտարները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին), Երևան, 2016, էջ 331-333: Նույնը՝ gisher.org, 20-ը հունիսի, 2010թ.:*

աշխարհագրությունը: Նույնիսկ Ադրբեջանի խորհրդարանը պաշտոնապես հատուկ որոշմամբ իրավունք էր տվել Հ. Ալիևին՝ այլ երկրներից վարձկաններ հավաքագրելու[1]:

1993թ. օգոստոսին Հ. Ալիևի հանձնարարականով Ադրբեջանի ներքին գործերի նախարար Ա. Ջավադովը Քաբուլում բանակցել է Աֆղանստանի վարչապետ Հեքմաթյարի հետ՝ նրանից խնդրելով 1500-ից 2500 մոջահեդներ[2]:

Ռազմաճակատի հարավային հատվածում հայ մարտիկների ձեռքն ընկան վարձկանների անվանացուցակներ, լուսանկարներ, որոնք կատարվել են Գյանջայում՝ նախկին խորհրդային բանակի 104-րդ օդադեսանտային դիվիզիայի ուսումնական կենտրոնում, կրոնական գրականություն, փուշտու և դարի լեզուներով զինվորական հրահանգներ, թերթեր, որոնք հրատարակվել են Փեշավարում և Կարաչիում, ադրբեջաներենից փուշտու և դարի լեզուներով թարգմանելու համար ձեռագիր բառարաններ, Պակիստանի հասցեով չառաքված նամակներ:[3]

Չնայած դրան, հայկական զորամասերի հանդուգն գործողությունները խուճապ են առաջացնում թշնամու ճամբարում: Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ հայերի հետագա գործողությունները լցնում են Թուրքիայի համբերության բաժակը: ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը մերժեց Թուրքիայի ներկայացուցչի առաջարկությունը՝ քելբաջարյան ռազմագործողությունը որակելու որպես ագրեսիա: Շուտով ռուսական կառավարության բռնած կոշտ դիրքն ամեն ինչ դրեց իր տեղը. քաշվեց Թուրքիայի սանձը[4]: Հետպատերազմյան շրջանում Թուրքիան ամեն կերպ ձգտում էր աջակցել իր իսկ կողմից ստեղծած թուրքական երկրորդ պետությանը՝ արցախյան հիմնահարցը լուծելու ի նպաստ Ադրբեջանի:

Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելը 1999 թ. հոկտեմբերին Բաքվում հայտարարել էր. «Ձեր վիշտը մեր վիշտն է: Եթե ձեզ ասեղը ծակի, մեզ համար դա հավասար կլինի բզով ծակվելուն»[5]:

Չնայած թուրանականությունը ժամանակի ընթացքում այլակերպվել է, բայց և այնպես Արցախի և Զանգեզուրի հարցը 20-րդ դարի սկզբներից առայսօր այդ գաղափարաբանության հետնախորշում մշտավառ է պահվում, և ամեն օր տակտիկ միջնաժամկետ ծրագրեր են որոճվում՝ այն յուրօրինակ ձևով լուծելու:

---

[1] ***Арутюнян В.,*** *События в Нагорном Карабахе, Хроника, ч. V (январь-1993 г. - июль, 1995 г.), Ереван, 1997, стр. 251.*

[2] *Gor P.w."Tis some poor fello's skull.post-soviet warfore in the southern Gaucas, Lincoln, 2008, p. 106.*

[3] ***Հասրաթյան Ս.,*** *Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, էջ 135:*

[4] ***Բալայան Վ.,*** *Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական և գաղափարական դրսևորումներն Արցախում՝ 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականը (պատմաքննական ուսումնասիրություն), ատենախոսություն պ.գ.դ. գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2013, էջ 419:*

[5] ***Բաբայան Դ.,*** *Արցախյան հիմնախնդիրը և պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, «21-րդ դար», հմ. 6, Երևան, 2011, էջ 98:*

2009 թ. օգոստոսին Նախիջևանում հրավիրվել էր թյուրքալեզու պետությունների 9-րդ գագաթնաժողովը, որին մասնակցել են Թուրքիայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ադրբեջանի նախագահները, Թուրքմենստանի վարչապետը:

Իլհամ Ալիևն իր ելույթի ժամանակ ասել է. «Ժամանակին Ադրբեջանի պատմական բնիկ տարածքի՝ Զանգեզուրի շրջանի անջատումը նրանից ու դրա միացումը Հայաստանին, աշխարհագրական առումով մասնատեց մեծ թուրանական աշխարհը: Այսպիսով՝ թյուրքական աշխարհի՝ որպես միասնական ընտանիքի գործունեությունը, դադարեցվեց տասնամյակներով»[1]:

Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը իր հերթին ասաց. «Մենք մեծապես կարևորում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և միշտ կլինենք նրա կողքին: Մենք հույսով ենք և հավատում ենք, որ Ադրբեջանի տարածքները շուտով կազատագրվեն»[2]:

Առավել ծրագրային էր Ղազախստանի նախագահ Նորսուլթան Նազարբաևի ելույթը, որն իր մեջ պարունակում էր թուրանականության վաղեմի փառքն ու այն վերականգնելու անհագ փափագը: Նա մասնավորապես նշել է. «Հեյդար Ալիևն ու Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը երազում էին թյուրքալեզու ժողովուրդների միասնության մասին: Մեր նախնիները իշխել են ընդարձակ տարածքների վրա՝ Միջերկրական ծովից մինչև Ալթայ, և թողել են մեզ մեծ արժեքներ: Կարծում ենք ժամանակն է, որ դրանք լայնորեն ներկայացվեն համաշխարհային հանրությանը...»[3]:

Էրդողանի կառավարման տարիներին Թուրքիան արդեն ոչ միայն աջակցում էր Ադրբեջանին, այլև իրեն ներկայացնում որպես հակամարտության կողմ:

Սկզբից Թուրքիան փորձում էր փոխել բանակցային ձևաչափը՝ ձգտելով իր տեղն ունենալ Մինսկի համանախագահ երկրների շարքում:

Տարիներ ի վեր Թուրքիան միջազգային կառույցներում սպասարկում է Ադրբեջանի շահերը: Առանց նախապայմանների հրաժարվելով ՀՀ-ի հետ ունենալ դիվանագիտական հարաբերություններ, Թուրքիան շրջափակման ճանապարհով փորձում է հայ ժողովրդի համար ստեղծել անտանելի պայմաններ՝ վերջնարդյունքում նպատակ ունենալով իր կամքը թելադրելու ՀՀ-ին և ԱՀ-ին: Վերջին տարիներին Թուրքիայի սպայակույտը մշտական ներկայություն ունի Ադրբեջանում: Այդ հանրապետության զինված ուժերի սպառազինումը, զորքերի մարտական պատրաստության բարձրացումը իրականացվում է Թուրքիայի և ՆԱՏՕ-ի չափանիշներով:

---

[1] ***Բալայան Վ.,*** *Արցախյան հիմնահարցը բոլշևիկյան և պանթուրքական գաղափարախոսության հոլովույթում, «ԼՂՀ դատական իշխանություն», հմ. 4 (8), Ստեփանակերտ, 2012, էջ 24-25:*

[2] *Նույն տեղում, էջ 25:*

[3] *Նույն տեղում, էջ 25:*

Թուրքիայի և նորանկախ Ադրբեջանի Հանրապետության միջև ռազմական համագործակցության պայմանագիր է կնքվել 1992թ.: Երկու երկրների միջև 1996 և 1999 թվականներին համանման պայմանագրեր ստորագրվեցին, և Թուրքիայի կողմից Ադրբեջանին տրվող ֆինանսական և ռազմատեխնիկական աջակցության չափերն ավելի մեծացան:[1]

2000 թվականից Թուրքիան իր ժամանակակից զենքերն սկսեց արտահանել Ադրբեջան: Այլ երկրներից, մասնավորապես՝ Ռուսաստանից և Իսրայելից նոր զինատեսակների գնման գործընթացը նոր ծավալներ ստացավ: Փորձագիտական շրջանակների գնահատականներով Ադրբեջանը Հայաստանի համեմատ վերջին 20 տարում 35-40 մլդ դոլլար ավելի շատ զենք է ձեռք բերել: Նավթից և գազից ստացված եկամուտները փակում էին այդ ծախսերը:

2010թ. Թուրքիան և Ադրբեջանը ստորագրեցին «Ռազմավարական գործընկերության և փոխադարձ աջակցության» մասին համաձայնագիր: Նոր պայմանագրով Թուրքիան պարտավորվեց ադրբեջանցիների համար առավել խոր մասնագիտական ռազմական կրթություն և վերապատրաստման հնարավորություններ ստեղծել: Համատեղ զորավարժությունների անցկացումը պարտադիր պայման համարվեց:

2018 թ. անցկացվել է համատեղ 7 զորավարժություն, 2019 թ.՝ 13[2]: 2020թ. հուլիս-օգոստոս ամիսներին Նախիջևանի ինքնավար հանրապետությունում անցկացված զորավարժությանը մասնակցեց 11000 թուրք զինվորական:

Ադրբեջանի ռազմական ակադեմիան և գլխավոր շտաբի քոլեջը հիմնադրվել են թուրք զինվորականների կողմից: Ուսումնական այդ հաստատությունների դասախոսները հիմնականում թուրք սպաներ են: Մյուս կողմից էլ հարյուրավոր ադրբեջանցի սպաներ կրթություն են ստանում թուրքական ռազմական ուսումնարաններում, ակադեմիաներում:

Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ Թուրքիան ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն ունեցավ: Դեռևս 2020 թ. հուլիսին Նախիջևանում ադրբեջանա-թուրքական համատեղ զորավարժության պատրվակով Թուրքիան մեծ քանակությամբ զորք, զինամթերք և ռազմական տեխնիկա տեղափոխեց Ադրբեջան: 44 օրյա պատերազմի ընթացքում այդ զորքերը տեղափոխվել էին արցախա-ադրբեջանական հակամարտության գոտի:

Թուրքական F-16 կործանիչները Էրզրումի շրջակայքից ուղղորդում էին «Բայրաքտար» անօդաչու սարքերի աշխատանքը: Զոհերից խուսափելու և հանրության շրջանում հակակառավարական տրամադրություններ չհրահրելու միտումով Թուրքիան ռազմական գործողությունների մեջ լայնորեն ներգրավեց սիրիացի, լիբանանցի վարձկաններին:

---

[1] *«Ապառաժ» , հմ. 10(494), 17-30 սեպտեմբերի, 2021:*

[2] *Նույն տեղում:*

2020թ. հուլիսի 18-ին սիրիական Sham·fm լրատվամիջոցը իր ֆեյսբուքյան էջում նշել է. «Թուրքական օկուպացիոն ուժերը Աֆրինի շրջանում հաշվառման կենտրոն են բացել՝ նպատակ ունենալով հայկական բանակի դեմ կռվելու համար Ադրբեջան տեղափոխել իրենց նկատմամբ լոյալ տրամադրված ահաբեկիչներին: Նրանց առաջարկվել է 2500 ամերիկյան դոլար ամսական աշխատավարձով 6 ամսվա համար պայմանագիր ստորագրել»[1]: Հալեպի նահանգում, Սիրիայի հյուսիսում գտնվող Խավար Քիլիսի թուրքական ռազմական հենակետում Ադրբեջանի սահմանապահ զորքերի զինվորականների հագուկապով կազմակերպվել են արաբ վարձկանների վարժանքներ: Այնուհետև նրանց Ադանայի թուրքական ռազմական օդանավակայանից տեղափոխում էին Ադրբեջան և մերձկասպյան զինվորական հենակետերից մեկում շարունակում վարժանքները: Վարձկանները հիմնականում պատկանում էին «Սիրիայի ազգային բանակ», «Սուլթան Մուրադ դիվիզիայի», «Ալ-Համազ» և «Աշ-շամ» խմբավորումներին:

Վերոհիշյալ կազմակերպությունների գործողությունները համակարգում էր «Սիրիական հեղափոխության և ընդդիմադիր ուժերի ազգային դաշինք» կազմակերպությունը, որի կենտրոնական շտաբը տեղակայված էր Ստամբուլում:

Ռազմական գործողությունների ժամանակահատվածում և դրան հաջորդած օրերին համացանցում սփռված տեսահոլովակներում հստակ երևում է, թե ինչպես ռազմաճակատի տարբեր հատվածներում սիրիայի վարձկանները կռվում էին հայկական բանակի դեմ:

«Սիրիացիները արդարության և արդարադատության համար» (STJ) կազմակերպության տվյալներով՝ մինչև 2020թ. հոկտեմբերի 13-ը ռազմական գործողություններին մասնակցելու համար 2000 սիրիացի պայմանագիր է ստորագրել:[2] Իսկ «Մարդու իրավունքների պաշտպանության սիրիական մոնիտորինգային կենտրոն»-ի (SOHR) տվյալներով Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում զոհվել են 293 վարձկան ահաբեկիչներ:[3]

Կոլումբիայի համալսարանի մարդու իրավունքների և խաղաղության հաստատման ծրագրերի տնօրեն, «Վայրագություններ Արցախում» նախագծի հեղինակ Դևիդ Ֆիլիպսը նշել է, որ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ուժերը թուրքական զինուժի և սիրիացի վարձկանների աջակցությամբ հարձակվել են Լեռնային Ղարաբաղի վրա: Այնուհետև նա պատմում է, թե ինչպես, հայերին սպանելու դիմաց պարգևատրումներ խոստանալով, Թուրքիան Սիրիայից և Լիբանանից շուրջ 2000 իսլամիստ ջիհադիստներ է

---

[1] *Участие боевиков во второй Арцахской войне. Роль Турции, 16 июля, 2021, Contributor.*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

տեղափոխել Ադրբեջան: «Այս ջիհադիստներն ինքնուրույն չեն գործել»,- գրել է Թուրքիայի ազգային հետախուզական ծառայության ղեկավար Հաքան Ֆիդանը. - Իսկ դաշտային գործողություններն իրականացրել են թուրք հրամանատարների միջոցով»[1]:

Շարունակելով այդ թեման՝ Դևիդ Ֆիլիպսը գրել է. «Ականատեսները նկարագրում են, թե ինչպես են ադրբեջանցի զինվորները խոշտանգում դիակները, գլխատում քաղաքացիներին, օգտագործում ֆոսֆորը: Անհրաժեշտ են պատժամիջոցներ մարդկության դեմ հանցանքներ և պատերազմական հանցագործություններ նախապատրաստողներին պատասխանատվության ենթարկելու համար»,- եզրահանգում է ամերիկացի գիտնականը[2]:

«Conflict intelligence Team» անկախ հետաքննող խումբը 2020թ. հոկտեմբերի 24-ին հրատարակել է իր ուսումնասիրության արդյունքները, որտեղ հավաստի փաստերով նկարագրված են Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ սիրիացի վարձկանների կատարած հանցագործությունները[3]:

2020թ. սեպտեմբերի 27-ին «Կոմերսանտ»-ին տված հարցազրույցում ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովը նշել է, որ Ադրբեջանը շուրջ 2000 վարձկան-ահաբեկիչների ներգրավել է ռազմական գործողությունների մեջ, և որ այդ ամենով մտահոգ նախագահ Վ. Պուտինը հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ղեկավարների հետ:[4]

Ղարաբաղյան երրորդ պատերազմին ծայրահեղական խմբավորումների ներկայացուցիչների մասնակցության մասին 2020թ. հոկտեմբերի սկզբներին խոսել է նաև ՌԴ արտաքին հետախուզության ղեկավար Սերգեյ Նարիշկինը:[5]

Փաստին ԵԽ գագաթնաժողովի առաջին նիստի արդյունքների ամփոփիչ հարցազրույցում Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը մասնավորապես նշել է, որ զինված հակամարտությանը Ադրբեջանի կողմից մասնակցելու համար, որին աջակցում է Թուրքիան, Սիրիայից 300-ից ավելի իսլամիստների թուրքական Ղազիանթեփեով տեղափոխել են Լեռնային Ղարաբաղ: «Դա հաստատված փաստ է,- ընդգծել է ֆրանսիայի նախագահը,- այդ մարդիկ նույնականացվել և հետապնդվում են, նրանք բոլորն էլ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման հետ կապեր ունեն: Ես այդ հարցը քննարկել եմ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Նա

---

[1] ***Դևիդ Ֆիլիպս***, *Բայդենը պետք է պատժամիջոցներ կիրառի հայերի դեմ պատերազմական հանցանք գործած անձանց դեմ, lurer.com, 13 փետրվարի, 2021:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս Кавказский узел, 22 октября, 2020 г.*

[4] *Տե՛ս https://www.vedomosti.ru/politics/news/2020/11/03/845680-mid-rossii-nazval-chislennost-inostrannih-naemnikov-v-karabahe.*

[5] *Նույն տեղում:*

հաստատել է, որ Ռուսաստանը նույնպես տիրապետում է այդ փաստերին»: Մակրոնի խոսքերով՝ Անկարան անցել է «կարմիր գիծը»:[1]

2020 թ. հոկտեմբերի կեսերին «Վաշինգտոն փոստ» թերթը գրել է, որ Ադրբեջանի կողմից կռվող 52 սիրիացի վարձկաններ զոհվել են Լեռնային Ղարաբաղում[2]:

Արդեն հոկտեմբերի երկրորդ կեսին Արցախի պաշտպանության բանակի մարտիկներին հաջողվել էր գերել սիրիացի 2 վարձկանների, որոնց հարցաքննություններից ակնհայտ երևում են Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ Թուրքիայի կատարած ռազմական հանցագործությունները:

Հարկ է նկատել, որ Թուրքիայի կառավարող շրջանները չեն թաքցնում ռազմական գործողություններին իրենց մասնակցության հանգամանքը:

Այսպես, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեվլյուտ Չավուշօղլուն 2020թ. սեպտեմբերի 27-ին ասել է, որ ադրբեջանական կողմին պատրաստ են աջակցել «ինչպես բանակցությունների ժամանակ, այնպես էլ ռազմի դաշտում»[3]:

Տարածաշրջանային որոշ վերլուծաբաններ նշում են. «Քանակապես շատ և ավելի լավ զինված ադրբեջանական բանակը Թուրքիայի աջակցությամբ ճնշեց հայկական ավելի փոքր և հնացած բանակին»:[4] Մեկ այլ տեսակետի համաձայն, Թուրքիան խորհրդականների, փորձառու զինվորականների ուղարկեց ղեկավարելու Բաքվի պատերազմը, և որ թուրքական ու իսրայելական անօդաչու թռչող սարքերի օգտագործումն այնպիսի բեկումնային դերակատարություն ունեցավ, որ կանխորոշվեց Ադրբեջանի հաղթանակը:[5]

Բոլոր պարագաներում Ադրբեջանի և Թուրքիայի համատեղ գործողությունների արդյունքում հաջողվեց Ղարաբաղյան երրորդ պատերազմի ժամանակ հաղթանակ տանել, որի պատճառով ԱՀ տարածքի 75 տոկոսն անցավ թշնամու գերիշխանության տակ, զոհերի թիվը հասավ 5000-ի: Պատերազմի հետևանքով ԱՀ վերահսկողությունից դուրս է մնացել 118 համայնք, 2 համայնք (Թաղավարդ, Ճարտար) էլ՝ մասնակի: Բռնազավթված տարածքում է մնացել 4 խոշոր և 118 փոքր բժշկական հաստատություն, 107 դպրոց, 17 մանկապարտեզ: 1656 ուսուցիչ տեղահանվել է:

Թշնամու վերահսկողության տակ են մնացել 10 պետական և 2 մասնավոր թանգարաններ, որտեղ պահպանվում էին 20345 ցուցանմուշներ, 4 արվեստի դպրոց, մոտ 4000 պատմամշակութային հուշարձան, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, հումանիտար քոլեջի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի, «Եզնիկ Մոզյան» ուսումնարանի ողջ ունեցվածքը:

---

[1] *https://www.rbc.ru/rbcfreenews/5f769d7b9a7947d6fb825ad3.*

[2] *https://www.vedomosti.ru/politices/news/2020/11/03/845680-mid-rossii-nazval-chislennost-inostrannih-naemnikov-v-karabahe.*

[3] *https://www.rbc.ru/rbcfreenews/5f769d7b9a7947d6fb825ed3.*

[4] *«Ապառաժ», հմ. 10(494), 17-30 սեպտեմբերի, 2021:*

[5] *Նույն տեղում:*

Հրետակոծությունից և հրթիռակոծությունից ԱՀ տարածքում վնասվել է 7031 շենք-շինություն: Նախապատերազմյան Արցախում գործող 37 հէկ-երից Արցախի վերահսկողության տակ է մնացել 8 հէկ, ինչի հետևանքով էլեկտրաէներգիայի արտադրությունը 2020թ. դեկտեմբերին կազմել է 20,4 մլն կիլովատ՝ 2019 թ. դեկտեմբեր ամսվա շուրջ 100 մլն կիլովատի դիմաց:

Այգիների, մշակվող հողահանդակների 70 տոկոսը զավթվել է թշնամու կողմից: 2455 հա կաթիլային համակարգով ոռոգվող հողերից 1693 հա մնացել է հակառակորդի կողմից բռնազավթված տարածքներում:

Ընդհանուր առմամբ, տնտեսությունը 224 տոկոսով անկում է արձանագրել: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2020թ. կազմել է 1 մլն 820 հազար դրամ կամ 3722 ամերիկյան դոլար, մինչդեռ 2019թ. 2 մլն 307 հազար դրամ կամ 4803 ամերիկյան դոլար էր:[1]

Գրականություն

1. **Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, Хроника, ч. V (январь-1993 г., - июль, 1995 г.), изд. АН Армении, Ереван, 1997.
2. **Բալայան Վ.**, Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական և գաղափարական դրսևորումներն Արցախում՝ 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականը (պատմաքննական ուսումնասիրություն), ատենախոսություն պ.գ.դ. գիտական աստիճանի համար, Երևան, 2013:
3. **Բալայան Վ.**, Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Զանգակ հրատ., Երևան, 2017:
4. **Հասրաթյան Ս.**, Ղարաբաղյան պատերազմ, Ամարաս հրատ., Երևան, 2001:
5. **Հասրաթյան Ս.**, Հայացք դրսից (օտարները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին), Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2016:
6. **Gor P.W.** Tis some poor fello's skull.post-soviet warfore in the southern Gaucas, Lincoln, 2008.
7. **Բալայան Վ.**, Արցախյան հիմնահարցը բոլշևիկյան և պանթուրքական գաղափարախոսության հոլովույթում, «ԼՂՀ դատական իշխանություն», հմ. 4 (8), Ստեփանակերտ, 2012:

[1] *Հաղորդում ԱՀ նախագահի 2020թ. գործունեության միջոցառումների ծրագրի ընթացքի և 2021թ. գործունեության միջոցառումների ծրագրի վերաբերյալ, 30 ապրիլի, 2021:*

8. **Բաբայան Դ.**, Արցախյան հիմնախնդիրը և պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, «21-րդ դար», հմ. 6, Երևան, 2011:
9. **Арешев А.**, Карабахская проблема в контексте региональной политики, «Карабахский курьер», но. 1, Москва, 2010.
10. «Ապառաժ» հմ. 10 (494), 17-30 սեպտեմբերի, Ստեփանակերտ, 2021:
11. «Посольство Турции, Турция, сближаясь с Арминией, хочеть ускорить развязку карабахского конфликта», Ae.az.http//www.aze.az/news-posolstvo-turciya-27331.html, 6 ноября, 2009.
12. Участие боевиков во второй Арцахской войне. Роль Турции, 16 июля, 2021, Contributor.
13. Դևիդ Ֆիլիպս, Բայդենը պետք է պատժամիջոցներ կիրառի հայերի դեմ պատերազմական հանցանք գործած անձանց դեմ, lurer.com, 13 փետրվարի, 2021:
14. Кавказский узел, 22 октября, 2020 г.
15. https://www.vedomosti.ru/politics/news/2020/11/03/845680-mid-rossii-nazval-chislennost-inostrannih-naemnikov-v-karabahe.
16. https://www.rbc.ru/rbcfreenews/5f769d7b9a7947d6fb825ad3
17. www.radiogan.com/portfolio/.
18. gisher. org, 20-ը հունիսի, 2010թ.:
19. Հաղորդում ԱՀ նախագահի 2020թ. գործունեության միջոցառումների ծրագրի ընթացքի և 2021թ. գործունեության միջոցառումների ծրագրի վերաբերյալ, 30 ապրիլի, 2021 (ներկայացվել է ԱՀ ԱԺ-ում):

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: